**Հավելված 1**

**Վարչության 2021թ.փետրվարի18-ի թիվ 01/012-72 Լ որոշման**

Խմբագրված՝Վարչության 2019թ. Նոյեմբերի 07-ի թիվ 01/064-283 Լ որոշման

| | | |
|---|---|---|
| Ardshinbank | LI-1110.0.05.01 | Էջ 1 / 1 |
| | Ձեռնարկատիրական վարկավորման, ինչպես նաև՝ վարկերի պայմանների փոփոխության և ապահովման միջոցի գործարքի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ցանկ[1] | Խմբագրություն՝ 03 |
| | | Ուժի մեջ է՝ 29.07.2022թ.-ից |

| Հաճախորդի դասը | Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր | երաշխավոր/փոխկապակցված անձ | Գրավատու |
|---|---|---|---|
| *1. Հայտի ընդունման և ուսումնասիրության համար հաճախորդից պահանջվող փասփաթղթեր*[2] | | | |
| **Անկախ հաճախորդի դասից** | 1. Վարկային դիմում-հայտ | - | - |
| | 2. ՊԵԿ հանձնված շահութահարկի հաշվետվություն (վերջին հաշվետու ժամանակահատվածի և դրան նախորդող 2 տարիների համար առկայության դեպքում), ԱԱՀ հաշվետվություն, (վերջին երեք տարվա) կամ շրջանառության հարկի հաշվետվություն կամ արտոնագրված (հաստատագրված) հարկի հաշվետվություն, վերջին մեկ տարվա համար)[3] | - | - |
| | 3. Գրավադրվող գույքի առկայության դեպքում՝ նախնական գնահատման հաշվետվություն կամ առկայության դեպքում՝ գնահատման հաշվետվություն և գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ[4] | | |
| **P դաս՝ 5 միլիարդ ՀՀ դրամ և ավել բանկային շրջանառություն կամ ՀՀ առաջին 50 խոշոր հարկատուներ)** | 1. Դեբիտորների և կրեդիտորների ցանկ (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն |
| | 2. Հաճախորդի հաշվեկշիռ (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 3. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (1 տարվա կտրվածքով վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 4. Վերջին 1 տարվա դրամական հոսքերի հաշվետվություն (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 5. 1 փոխառուի գծով 5 մլրդ. ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող վարկերի դեպքում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացություն (առկայության դեպքում*)** | | |
| | 6. Գործընկերների հետ կնքված հիմնական պայմանագրեր, կատարողական ակտեր,երաշխիքի, ակրեդիտիվի և ֆակտորինգի դեպքում՝ հիմքեր | | |
| | 7. Իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության) | | |
| | 8. Գործող պայմանագրերի ռեեստր (ըստ անհրաժեշտության) | | |
| | 9. 500 մլն ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող նախագծի ֆինանսավորման վարկերի դեպքում բիզնես պլան՝ համաձայն Հավելված 1-ի (կարող է ներկայացվել նաև այլ ֆորմատով): Մինչև 500 մլն. ՀՀ դրամով և/կամ դրան համարժեք արտարժույթով վարկերի մասով ըստ անհրաժեշտության: | | |
| | 10. Կապիտալ ներդրումների դեպքում նպատակի բացվածք և<br>- Անշարժ գույքի ձեռքբերման դեպքում ձեռք բերվելիք գույքի սեփականության վկայական, նկարներ,<br>- Հիմնական միջոցների ձեռք բերման դեպքում ցանկ և տեխնիկական նկարագրություն,<br>- Վերանորոգման, շինարարության իրականացման դեպքում բացված նախահաշիվ, | | |
| **A դաս (1.2-5 միլիարդ ՀՀ դրամ բանկային շրջանառություն)** | 1. Դեբիտորների և կրեդիտորների ցանկ (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն |
| | 2. Հաճախորդի հաշվեկշիռ (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 3. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (1 տարվա կտրվածքով վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 4. Վերջին 1 տարվա դրամական հոսքերի հաշվետվություն (վերջին եռամսյակի վերջի դրությամբ) | | |
| | 5. 1 փոխառուի գծով 5 մլրդ. ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող վարկերի դեպքում ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացություն (առկայության դեպքում)* | | |
| | 6. Գործընկերների հետ կնքված հիմնական պայմանագրեր, կատարողական ակտեր,երաշխիքի, ակրեդիտիվի և ֆակտորինգի դեպքում՝ հիմքեր | | |
| | 7. Այլ բանկերում առկա բանկային հաշիվների քաղվածք նախորդ 12 ամիսների կտրվածքով (Հաճախորդի համար ընդունելի ձևաչափով) | | |
| | 8. Իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության) | | |
| | 9. Գործող պայմանագրերի ռեեստր (ըստ անհրաժեշտության) | | |
| | 10. 500 մլն ՀՀ դրամը և/կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող նախագծի ֆինանսավորման վարկերի դեպքում բիզնես պլան՝ համաձայն Հավելված 1-ի (կարող է ներկայացվել նաև այլ ֆորմատով): Մինչև 500 մլն. ՀՀ դրամով և/կամ դրան համարժեք արտարժույթով վարկերի մասով ըստ անհրաժեշտության: | | |

| | | | |
|---|---|---|---|
| | 11. Կապիտալ ներդրումների դեպքում նպատակի բացվածք և<br>- Անշարժ գույքի ձեռքբերման դեպքում ձեռք բերվելիք գույքի սեփականության վկայական, նկարներ,<br>- Հիմնական միջոցների ձեռք բերման դեպքում ցանկ և տեխնիկական նկարագրություն,<br>- Վերանորոգման, շինարարության իրականացման դեպքում բացված նախահաշիվ, | | |
| ՓՀԷԿ | 1. Դեբիտորների և կրեդիտորների ցանկ (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության տվյալներով) | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն | Ըստ անհրաժեշտության՝ այլ տեղեկատվություն |
| | 2. Հաճախորդի հաշվեկշիռ (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության) | | |
| | 3. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (Հայտին նախորդող 12 ամիսների կտրվածքով) | | |
| | 4. Գործընկերների հետ կնքված հիմնական պայմանագրեր, կատարողական ակտեր,երաշխիքի, ակրեդիտիվի և ֆակտորինգի դեպքում՝ հիմքեր | | |
| | 5.Այլ բանկերում առկա բանկային հաշիվների քաղվածք նախորդ 12 ամիսների կտրվածքով (Հաճախորդի համար ընդունելի ձևաչափով) | | |
| | 6. Լիցենզիա, թույլտվություն, նախագիծ՝ կրկնակի փորձագիտական հիմնավորմամբ,կատարված և կատարվելիք ներդրումների ժամանակացույց (թե սեփական, թե վարկային միջոցների հաշվին) | | |
| | 7. Իրավասու մարմնի կողմից տրամադրված տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության ) | | |

***Աուդիտորական եզրակացության բացակայության դեպքում՝ ՎԿ որոշում**

**** Բանկի համար ընդունելի են համարվում ստորև նշված աուդիտորական ընկերությունները՝ «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ (Deloitte Armenia), «Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա» ՍՊԸ (PWC Armenia), «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ,(EY Armenia), «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ ( KPMG Armenia), «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ»ՓԲԸ (Grant Thornton Armenia), «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ (BDO Armenia ), «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ (Baker Tilly Armenia), «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ (PKF Armenia), «ԹԱՈՒԷՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՔՈՆՍԱԼԹԱՆՏՍ» ՓԲԸ, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ, Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ,**

**Եթե պայմանագրի կողմը և/կամ կողմերը ոչ ռեզիդենտ են, վարկի տրամադրման վերաբերյալ դրական դիրքորոշումից հետո, մինչև վարկի տրամադրումը Բանկի լրացուցիչ պահանջով հաճախորդը պետք է ներկայացնի բանկի կողմից ընդունելի իրավաբանական կազմակերպության (The Legal 500 և/կամ Global Chambers և/կամ այլ որակավորված իրավաբանական կազմակերպություն) կողմից տրված իրավաբանական եզրակացություն՝ վարկառուի իրավունակության և գործարքի՝ տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ, որի վերաբերյալ Բանկի ԻԾ-ն կհայտնի դիրքորոշում:**

*1. ա) սույն փաստաթղթով սահմանված դասերը կարող են որոշվել հաճախորդի և(կամ) հաճախորդի և փոխկապակցված կազմակերպությունների տվյալների հիման վրա , ըստ Բանկի հայեցողության*

*բ) Ֆին.կազմակերպությունները ներկայացնում են P դասի հաճախորդների համար նախատեսված ցանկով փաստաթղթերը:*

*գ) Ֆակտորինգի դեպքում՝ փաստաթղթերը պահանջվում են պարտապանի համար*

*2 . ա ) առաջնակարգ գրավի, բանկային երաշխիքի ապահովվածությամբ ֆինանսական գործիքների դեպքում պահանաջվում են սույն ցանկի միայն 1-ին բաժնի 1-ին կետում, իսկ մրցույթների մասնակցության երաշխիքների դեպքում՝ միայն 1-ին բաժնի 1-2 կետերում նշված փաստաթղթերը*

*բ) ֆինանսական գործիքի տոկոսադրույքի վերանայման/ գումարի չափի նվազման և/կամ վերջնաժամկետը պահպանելով գրաֆիկի, մարման օրվա փոփոխության դեպքում կարող են պահանաջվել սույն ցանկի միայն 1-ին բաժնի 1-2 կետերի փաստաթղթերը:*

*գ) Դեբիտորների և կրեդիտորների ցանկը, Հաճախորդի հաշվեկշիռը և Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունները կարող են ներկայացվել հաճախորդի համար ընդունելի ձևաչափով:*

*3. Սույն կետում նշված փաստաթղթերը պահանջվում է հաճախորդից, եթե տեղեկատվությունը առկա չէ պաշտոնական հրապարակային կայքերում:*

*4. Հաճախորդի կողմից **նախնական** գնահատման հաշվետվություն ներկայացվելու դեպքում Բանկի կողմից որոշման կայացումից հետո պահանջվում է գնահատման հաշվետվություն:*

*ա) Գնահատման հաշվետվություն ընդունվում է, եթե այն տրված է Բանկի կողմից հավաստագրված կազմակերպության կողմից: Նոր /հայտի ժամկետը նախորդող 6 ամիսների ընթացքում / ձեռքբերված կամ ձեռքբերվող շարժական գույքի գծով կարող է ներկայացվել ինվոյս: Նոր գրավադրվող գույքի դեպքում՝ գնահատման հաշվետվության վաղեմության ժամկետը պետք է լինի առավելագույնը 6 ամիս: Բանկում գործող կամ մարված վարկային պարտավորությունների համար նախկինում գրավադրված գույքի համար առկա գնահատման հաշվետվությունների վաղեմության ժամկետը պետք է լինեն ոչ ավել, քան 3 տարի:*

*բ) **Գրավադրվող գույքի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ՝***

*1) **Անշարժ գույքի դեպքում՝** Անշարժ գույքի սեփականության իրավունքը հավաստող վկայական,*

*2) **տրանսպորտային միջոցի դեպքում՝** Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետ.գրանցման վկայական*

***2. Վարկային գործիքի ձևակերպման ինչպես նաև և վարկային գործիքի պայմաններում փոփոխության կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ***

| Հաճախորդի դասը | Հաճախորդ | Երաշխավոր | Գրավատու |
|---|---|---|---|
| P դաս/A դաս | 1. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում, *վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)*<br>2. Ջուտ ակտիվների (ՍՊԸ-ների դեպքում) կամ ակտիվների հաշվեկշռային արժեքի (բաժնետիրական ընկերությունների դեպքում) վերաբերյալ տեղեկանք (ոչ վաղ, քան վարկային կոմիտեի որոշման օրվա ամսվա 1-ի դրությամբ), իսկ խոշոր գործարքի դեպքում՝ իրավասու մարմնի որոշում վարկային գործիքի վերաբերյալ: Ընդ որում, եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է Հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում *(բնօրինակ):* | **Իրավաբանական անձանց դեպքում**<br>1. Կանոնադրություն, բոլոր փոփոխություններով<br>2. գործադիր մարմնի/ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ<br>3. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում) (վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)<br>4. Ջուտ ակտիվների (ՍՊԸ-ների դեպքում) կամ ակտիվների հաշվեկշռային արժեքի (բաժնետիրական ընկերությունների դեպքում) վերաբերյալ տեղեկանք (ոչ վաղ, քան վարկային կոմիտեի որոշման օրվա ամսվա 1-ի դրությամբ), իսկ խոշոր գործարքի դեպքում՝ իրավասու մարմնի որոշում երաշխավորության վերաբերյալ: Ընդ որում, եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է երաշխավորի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում *(բնօրինակ):* | **Իրավաբանական անձանց դեպքում**<br>1. Կանոնադրություն, բոլոր փոփոխություններով<br>2. Գործադիր մարմնի/ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ<br>3. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում, *վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)*<br>4. Ջուտ ակտիվների (ՍՊԸ-ների դեպքում) կամ ակտիվների հաշվեկշռային արժեքի (բաժնետիրական ընկերությունների դեպքում) վերաբերյալ տեղեկանք (ոչ վաղ, քան վարկային կոմիտեի որոշման օրվա ամսվա 1-ի դրությամբ), իսկ խոշոր գործարքի դեպքում՝իրավասու մարմնի որոշում ապահովման միջոցի վերաբերյալ: Ընդ որում եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է գրավատուի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում *(բնօրինակ):* |

| | | | |
|---|---|---|---|
| | | **Ֆիզիկական անձանց դեպքում**<br><br>1. Անձը հաստատող փաստաթուղթ<br>2. Հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի առկայություն | **Ֆիզիկական անձանց դեպքում**<br>1. Անձը հաստատող փաստաթուղթ<br>2. Գույքի  ձեռքբերման հիմքերից կախված՝ գրավատուների ամուսնացած լինելու դեպքում՝ ամուսնության վկայական և ամուսնու/կնոջ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնու մահվան դեպքում՝ մահվան վկայականի, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայական,<br>3. Հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի առկայություն |
| **B դաս/ C  դաս** | 1. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ  մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում, *վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)*<br>2. Իրավասու մարմնի որոշում վարկային գործիքի վերաբերյալ: Ընդ որում, եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է Հաճախորդի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում *(բնօրինակ):* | Իրավաբանական անձանց դեպքում<br>1. Կանոնադրություն, բոլոր փոփոխություններով<br>2. գործադիր մարմնի/ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ<br>3. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում) (վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)<br>4.Իրավասու մարմնի որոշում երաշխավորության վերաբերյալ: Ընդ որում եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է երաշխավորի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում (բնօրինակ): | **Իրավաբանական անձանց դեպքում**<br>1. Կանոնադրություն, բոլոր փոփոխություններով<br>2. գործադիր մարմնի/ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ<br>3 Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակ մասնագիտացված կազմակերպությունից (բաժնետիրական ընկերության դեպքում, վաղեմության ժամկետը՝ 1 ամիս)<br>4. Իրավասու մարմնի որոշում ապահովման միջոցի վերաբերյալ: Ընդ որում եթե ՍՊԸ-ն ունի մեկ մասնակից, որը նաև գործադիր մարմնի ղեկավար է, կամ երբ խոշոր գործարք կնքելու լիազորությունը կանոնադրությամբ վերապահված է գրավատուի գործադիր մարմնի ղեկավարին, ապա որոշում չի պահանջվում *(բնօրինակ)*: |
| | | Ֆիզիկական անձանց դեպքում<br>1. Անձը հաստատող փաստաթուղթ<br>2. Հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի առկայություն | **Ֆիզիկական անձանց դեպքում**<br>1. Անձը հաստատող փաստաթուղթ<br>2. Գույքի  ձեռքբերման հիմքերից կախված՝ գրավատուների ամուսնացած լինելու դեպքում՝ ամուսնության վկայական և ամուսնու/կնոջ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնու մահվան դեպքում՝ մահվան վկայականի, ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության վկայական,<br>3. Հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի առկայություն |

** ա) Փաստաթղթերը չեն պահանջվում վարկային գործիքի գումարի, ժամկետի, տոկոսադրույքի, գրաֆիկի վերանայման համար այն դեպքում, եթե դրա հետևանքով վարկային գործիքի գումարի, ժամկետի և տոկոսի ավելացում տեղի չի ունենում*
*բ) Ոչ ռեզիդենտ Հաճախորդի/Երաշխավորի/Գրավատուի և ոչ ռեզիդենտ Իրավաբանական անձ մասնակցի (բաժնետիրոջ) փաստաթղթերի տեսակը և/կամ տեղեկատվության աղբյուրը սահմանվում է Բանկի կողմից*

| ***3. Ապահովման միջոցի գործարքի ձևակերպման, ինչպես նաև՝գրանցված գործարքներում փոփոխության կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ (անկախ հաճախորդի դասից)*** | |
|---|---|
| | **Փաստաթղթի անվանումը** |
| **Անշարժ գույք** | 1. Միասնական տեղեկանք կադաստրից գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ   *(բնօրինակ)* |
| | 2.Վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագիր, եթե անշարժ գույքը հանձնված է վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ գտնվում է վարձակալված հողամասի վրա |
| | 3. Անհրաժեշտության դեպքում՝ նաև սեփականության վկայականի տրման հիմքեր (սեփականաշնորհման որոշումներ, առուվաճառքի, նվիրատվության   պայմանագիր, ժառանգության իրավունքի վկայագիրր, դատարանի վճիռներ և այլն) |
| **Տրանսպորտային միջոց** | 1. Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր |
| | 2. Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետ.գրանցման վկայական  *(բնօրինակ)* |
| **Գյուղատնտեսական տեխնիկա** | Գյուղ. տեխնիկայի հաշվառման վկայագիր |
| **Ճանապարհաշինարարական, շինարարական տեխնիկա** | Ճանապարհաշինարարական,շինարարական տեխնիկայի հաշվառման տեխնիկական վկայագիր |
| **Շարժական գույք** | Շարժական գույքի տեխնիկական անձնագրեր և/կամ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր  (պայմանագրեր և/կամ գնման ակտեր և/կամ Գրավատուի կողմից տրված տեղեկանք և/կամ այլ հիմավորող փաստաթղթեր) |
| **Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ** | Սեփականության իրավունքը հաստատող  այլ փաստաթղթեր  (պայմանագրեր և/կամ գնման ակտեր և/կամ Գրավատուի կողմից տրված տեղեկանք և/կամ այլ հիմավորող փաստաթուղթ) |
| **Իրավունքի գրավ** | **Կառուցապատման իրավունքի գրավի դեպքում՝**<br>1. Հողամասի կառուցապատման իրավունքի վերաբերյալ պայմանագիր<br>2. միասնական տեղեկանք կադաստրից գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ *(բնօրինակ)*<br>3. Հողամասի կառուցապատման իրավունքի նկատմամբ պետական գրանցման վկայական |
| | **Վարձակալության իրավունքի գրավի դեպքում՝**<br>1.Վարձակալության պայմանագիր և դրանով նախատեսված լինելու դեպքում՝ վարձատուի գրավոր համաձայնությունը՝ վարձակալության իրավունքը գրավ դնելու համար<br>2.միասնական տեղեկանք կադաստրից գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ *(բնօրինակ)*<br>3.վարձակալության իրավունքի գրանցման վկայական |
| | **Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունքի (բաժնետոմսի) գրավի դեպքում՝**<br>1. Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը վարող մասնագիտացված կազմակերպությունից տրված քաղվածք՝ բաժնետոմսերի սահմանափակումների վերաբերյալ գրառմամբ *(վաղեմության ժամկետ՝ 1 ամիս)*<br>2. Գործունեության իրականացման համար պետական իրավասու մարմնի կողմից տրամադրված լիցենզիաների/թույլտվությունների/համաձայնությունների պատճենները՝ առկայության դեպքում կամ լիցենզիաների/թույլտվությունների/համաձայնությունների բացակայության և(կամ) դրանց ստացման հետ կապված ընթացիկ գործընթացի առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանք՝ տրամադրված այն  ընկերության իրավասու մարմնի կողմից, որի կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունքը (բաժնետոմսը) գրավադրվում է,<br>3. բաժնետոմսի առուվաճառքի և (կամ) գրավադրման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական իրավասու մարմնի որոշում (համաձայնություն, թույլտվություն) |

| | |
|---|---|
| [illegible] | <u>**Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունի (բաժնեմասի) գրավի դեպքում՝**</u><br>1. Պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված քաղվածք՝ մասնակցության իրավունի (բաժնեմասի) սահմանափակումների վերաբերյալ գրառմամբ (վաղեմության ժամկետ՝ 1 ամիս)<br>2. Գործունեության իրականացման համար պետական իրավասու մարմնի կողմից տրամադրված լիցենզիաների/թույլտվությունների/համաձայնությունների պատճենները՝ առկայության դեպքում կամ լիցենզիաների/թույլտվությունների/համաձայնությունների բացակայության և(կամ) դրանց ստացման հետ կապված ընթացիկ գործընթացի առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանք՝ տրամադրված այն ընկերության իրավասու մարմնի կողմից, որի կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունքը (բաժնեմասը) գրավադրվում է,<br>3.բաժնեմասի առուվաճառքի և (կամ) գրավադրման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական իրավասու մարմնի որոշում (համաձայնություն, թույլտվություն) |
| | <u>**Այլ անձանց հանդեպ ունեցած պահանջի իրավունքի գրավի դեպքում**</u><br>1.Պահանջի իրավունքը հաստատող պայմանագրերը և այդ պահանջը հավաստող պարտապանի կողմից տրված փաստաթուղթ *(բնօրինակ, վաղեմության ժամկետ՝ 15 աշխատանքային օր)* (Սույն կետով նշված պահանջը հաստատող պարտապանի կողմից տրված փաստաթուղթ չի պահանջվում, եթե որպես պարտապան է հանդես գալիս «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, «Արցախէներգո» ՓԲԸ-ն և Արդշինբանկ ՓԲԸ-ն) |
| *Գրավադրվող գույքը վարձակալության հանձնված և/կամ վարձակալության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում պահանջվում է վարձակալության իրավունքի դադարեցման և/կամ գրավադրման վերաբերյալ համաձայնություն:* | |

| ***4. Փաստաթղթերի և տեղեկատվության ցանկի վերաբերյալ ընդհանուր դրույթներ*** |
|---|
| 1. Անձը հաստատող փաստաթուղթ է համարվում ՝<br>Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը, նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, վերադարձի վկայականը՝ միայն Հայաստանի Հանրապետություն վերադառնալու համար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը. փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը: |
| 2. Օտարալեզու փաստաթղթերը (լիազորագիր, կանոնադրություն, certificate of incumbency կամ դրան համարժեք բովանդակությամբ փաստաթուղթ) օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետք է վավերացված լինեն ապոստիլով: Նոտարական վավերացում չպահանջող գործարքների դեպքում (բացառությամբ անգլերեն և ռուսերեն լեզուներով տրվածներից) պետք է թարգմանված լինեն հայերեն և վավերացվեն առնվազն որակավորված թարգմանչի կողմից: Եթե կնքվելիք գործարքը վավերացվելու է նոտարական կարգով, ապա օտարալեզու փաստաթղթերը, այդ թվում՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով տրվածները պետք է թարգմանված լինեն նոտարական կարգով, բացառությամբ՝ ԽՍՀՄ ժամանակաշրջանում ռուսերեն լեզվով ամուսնության վկայականների, որի թարգմանություն չի պահանջվում: |
| 3. Սույն ցանկերի փաստաթղթերը ներկայացվում են լուսապատճենված տարբերակով, բացառությամբ լիազորագրերի և այն դեպքերի, երբ փաստաթղթերի ցանկում առկա է նշում դրանք բնօրինակ ներկայացնելու վերաբերյալ: |
| 4. Հայտի ուսումնասիրության, ձևակերպման և/կամ գործարքների առանձնահատկություններով և/կամ գործարքի կողմի կամ մասնակցի ոչ ռեզիդենտությամբ պայմանավորված Բանկի և/կամ նոտարի կողմից կարող են պահանջվել սույն ցանկում նշված փաստաթղթերին փոխարինող այլ կամ լրացուցիչ փաստաթղթեր/տեղեկատվություն:Նոտարական ձևակերպում պահանջող գործարքների դեպքում ՝ նոտարը կարող է պահանջել փաստաթղթերի բնօրինակներ:<br>Հաճախորդից/Երաշխավորից/Գրավատուից կարող է պահանջվել Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից տեղեկանք կամ այլ իրավասու մարմնից կանոնադրության փոփոխության, գործադիր մարմնի ղեկավարի և մասնակիցների վերաբերյալ տեղեկանք, եթե Հաճախորդը/Երաշխավորը/Գրավատուն կամ նրանց մասնակիցը հանդիսանում է կառավարություն, պետական ոչ առևտրային կազմակերպություն, Ֆինանսական կազմակերպություն, կոոպերատիվ, հիմնադրամ կամ որևէ այլ մարմին, որի վերաբերյալ պահանջված տվյալները չեն արտացոլվում կամ առկա չեն՝ պետ.ռեգիստրի կողմից տրված տեղեկանքում, ՀՀ, ԱՀ կառավարությունների և ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքերում: |
| 5. Եթե գործարքի կողմերից (գրավատու, երաշխավոր և այլն) որևէ մեկի փոխարեն հանդես է գալիս լիազորված անձ, ապա պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է լիազորագիր (նոտարական վավերացմամբ կամ նոտարական վավերացմանը հավասարեցված) և լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթ: Լիազորագիրը պետք է համապատասխանի Բանկի պահանջներին, այն Բանկի համար ընդունելի է լիազորագրում նշված ժամկետում, սակայն ոչ ավել, քան լիազորագրի տրման օրվանից 3 տարվա ընթացքում, իսկ լիազորագրով ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ լիազորագրի տրման օրվանից մեկ տարվա ընթացքում: Իրավաբանական անձի կողմից տրամադրված լիազորագիրը նոտարական վավերացում չի պահանջում: |